

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2014 թ.

N 518-Ն

ք. Ստեփանակերտ

**ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՏԱՌՆԵՐԻ  
ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Հաստատել պետական սեփականություն համարվող անտառների վարձավճարի նվազագույն չափը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ**

Հ/Հ	Շրջանների անվանումը	Գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերի (անօգտագործելի) կադաստրային արժեքը ըստ շրջանների (հազար դրամ)	Մեկ հեկտար պետական սեփականություն համարվող անտառների վարձավճարի նվազագույն չափը					
			մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակներով անտառօգտագործում		կենդանական աշխարհի վերարտադրության կազմակերպման և օգտագործման նպատակներով անտառօգտագործում		գիտահետազոտական նպատակներով անտառօգտագործում	
			գործակիցը	վարձավճարը (հազար դրամ)	գործակիցը	վարձավճարը (հազար դրամ)	գործակիցը	վարձավճարը (հազար դրամ)
1	Ասկերան	67,5	0,2	13,5	0,08	5,4	0,04	2,7
2	Մարտակերտ	60,0	0,2	12,0	0,08	4,8	0,04	2,4
3	Հադրութ	57,5	0,2	11,5	0,08	4,6	0,04	2,3
4	Մարտունի	62,5	0,2	12,5	0,08	5,0	0,04	2,5
5	Շահումյան	62,5	0,2	12,5	0,08	5,0	0,04	2,5
6	Քաշաթաղ	62,5	0,2	12,5	0,08	5,0	0,04	2,5
7	Շուշի	57,5	0,2	11,5	0,08	4,6	0,04	2,3

**Ծանոթություն**

Անտառային հողերի գյուղատնտեսական նպատակների համար նախատեսված հողատեսքերի տարեկան վարձավճարների նվազագույն (մեկնարկային) չափը հավասարեցվում է համապատասխան հողագնահատման շրջանում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի (հողի գնահատման խմբերի) համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափերին և դրանց տրամադրումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված նորմերի կիրառմամբ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**